theopharma

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՏԻԿԻՆ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

**Հարգելի՛ տիկին Գրիգորյան,**

Հայտնում ենք Ձեզ, որ պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված՝ կից «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» ծանուցմամբ, ի թիվս այլնի՝ պահանջվել է շտկել նաև՝ ներկայացնելով չգրանցված դեղ առաջարկելու համար պահանջվող տեղեկանք՝ իրավերով սահմանված կարգով՝ ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Շտկված տարբերակներն անհրաժեշտ է ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

Այս առումով՝ հարկ ենք համարում նշել, որ աճուրդով առաջարկվող դեղերի վերաբերյալ պահանջվող տեղեկանքների ստացման նպատակով, «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն արդեն իսկ համապատասխան դիմումներ են ներկայացվել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին և նշված դիմումներին ի պատասխան՝ տեղեկանքներն ողջամիտ ժամկետում ստանալուն պես, դրանք կներկայացվեն Ձեզ՝ էլեկտրոնային եղանակով:

Խնդրում ենք ընդունել ի գիտություն:

Կանխավ շնորհակալություն

**Հարգանքով՝**
**«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վահրամ Մակինյան**
**23/09/2025թ.**




Ստորագրող
ՇՈՂԱԿԱԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
5709860310

2025-09-23 19:48:54 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

miD

Armavir Region, Parakar, Tairov, Demirchyan District 1st street 22/1, 1129, RA
+374 (11) 606 606
www.theopharma.am
info@theopharma.am